ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ծածկագիր՝ 81083719-OT-5

Ք. Երևան Մայիսի 15, 2026թ.

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը նախատեսում է ձեռք բերել **պրեմիում տեսակի ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք** Շվեյցարիայի Համադաշնության կառավարության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» (FORACCA) ծրագրի շրջանակում: Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեյցարիայի Համադաշնության Կառավարության միջև 2004թ. ապրիլի 3-ին կնքված տեխնիկական, ֆինանսական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեյցարիայի Համադաշնության Կառավարության» միջև կնքված միջազգային համաձայնագրով սահմանված հարկային և մաքսային արտոնությունների կիրառման՝ 13/07/06թ.- ի թիվ 1091-Ն և 02/04/15թ.- ի թիվ 340-Ն ՀՀ Կառավարության որոշումները:

Վառելիքը նախատեսվում է ձեռք բերել 2026 թվականի մայիս ամսվա ընթացքում.

- **պրեմիում տեսակի բենզին՝ 5000լ,**
- **դիզելային վառելիք՝ 2500լ:**

Գնումը կատարվում է մեկ լոտով:

Կից ներկայացվում է առաջարկի ձևաթուղթը, որը ներառում է վառելիքի պարտադիր տեխնիկական չափորոշիչները:

Գնառաջարկի ներկայացման պարտադիր պայմանները.

- Գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետն է **2026թ. մայիսի 22-ը**:
- Գնառաջարկը պետք է ներկայացնել կից ձևաթղթի վրա լրացնելով աղյուսակի 3-րդ, 6-րդ և 7-րդ սյուները՝ կնքված, ստորագրված և լրացված հստակ ամսաթվով:
- Գնառաջարկը պետք է ներկայացնել **shovhannisyan@shen.am** էլեկտրոնային հասցեին՝ թեմա բաժնում նշելով **«Գնառաջարկ-վառելիք-81083719-OT-5»**:

Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» (FORACCA) ծրագիրը համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) և Հայաստանի անտառային դաշինքի անդամ չորս իրականացնող կազմակերպությունների՝ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության, «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից: Ծրագրի իրականացման գործընկերներն են նաև Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների շվեյցարական դաշնային ինստիտուտը (WSL) և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO):

- Գնառաջարկը ներկայացնել՝ հաշվի առնելով, որ առաջարկվող գինը պետք է գործի մրցույթի վերջնաժամկետից հետո 3 (երեք) աշխատանքային օր՝ մինչև մրցույթը շահող առաջարկի ընտրությունը և գնառաջարկով ներկայացված պայմաններով պայմանագրի կնքումը:

Հատուկ նախապայմանները.

- Վաճառողը/մատակարարը վառելիքը պետք է տրամադրի կտրոններով, որոնք սպասարկվում են ՀՀ տարածքում գործող բենզալցակայաններում:
- Վաճառողը/մատակարարը պետք է ունենա բենզալցակայաններ ՀՀ բոլոր համայնքներում: Վաճառողը/մատակարարը պետք է ներկայացնի ՀՀ տարածքում իր կողմից սպասարկվող բենզալցակայանների ցանցի քարտեզը կամ ցանկը:

Գնահատման չափորոշիչները.

- Ներկայացված գնառաջարկներից հաղթող է ճանաչվելու այն առաջարկը, որը համապատասխանում է ներկայացված տեխնիկական պայմաններին և տրամադրում է առավել ցածր գին:

Հաղթող կազմակերպության հետ կկքնվի մատակարարման պայմանագիր:

Կոնտակտային անձ՝ Սիրանուշ Հովհաննիսյան

Հեռախոս՝ 077362988

Էլ. հասցե՝ shovhannisyan@shen.am

Հարգանքով՝

«Շեն» ԲՀԿ

Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» (FORACCA) ծրագիրը համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) և Հայաստանի անտառային դաշինքի անդամ չորս իրականացնող կազմակերպությունների՝ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության, «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից: Ծրագրի իրականացման գործընկերներն են նաև Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների շվեյցարական դաշնային ինստիտուտը (WSL) և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO):